ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան 21.11.2017թ.
Ժամը 15:00

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան
Գնահատողներ՝ Խաչիկ Կիրակոսյան
Վարդուհի Վարդանյան
Բացողներ՝ Ռոմելա Հարությունյան
Մարի Առաքելյան
Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Մ. Սիմոնյան)

1. <<ԳԱԼՏ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի կողմից պայմանագրի նախագիծը հրավերով սահմանված ժամկետում չստորագրելու և պայմանագրի ապահովում չներկայացնելու մասին:
2. Ընտրված մասնակցի որոշման և հայտարարման մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. <<ԳԱԼՏ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի կողմից պայմանագրի նախագիծը հրավերով սահմանված ժամկետում չստորագրելու և պայմանագրի ապահովում չներկայացնելու մասին:

(Մ. Սիմոնյան)

1.1 ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2017թ.-ի թիվ 4 որոշմամբ ընտրված մասնակից է հայտարարվել <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ն: Սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 2-րդ աշխատանքային օրը՝ 03.11.2017թ.-ին ընտրված մասնակից <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցվել է՝ ներկայացվել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Գալտ Գրուպ ՍՊԸ-ն ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 9.5 կետով սահմանված ժամկետում՝ պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ չի ներկայացրել պայմանագրի ապահովում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով հանձնաժողովի որոշմամբ <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Ղեկավարվելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով

հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետով 5 աշխատանքային օրվա ընթացքում <<Գալտ Գրուպ ՍՊԸ>>-ի վերաբերյալ տվյալները համապատասխան հիմքերով ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Ընտրված մասնակցի որոշման և հայտարարման մասին:

(Մ. Սիմոնյան)

2.1 ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.10.2017թ.-ի թիվ 3 որոշմամբ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել <<ԱՐԳՈՀՇԻՆ>> ՍՊԸ-ն:

2.2 Նկատի ունենալով այն հանգամանքը, որ <<Գալտ Գրուպ>> ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից և ղեկավարվելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 49-րդ կետով ընտրված մասնակցի որոշման նպատակով հանձնաժողովը որոշեց <<ԱՐԳՈՀՇԻՆ>> ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտով առաջադրված ապրանքի ամբողջական նկարագիրը:

2.3 Հանձնաժողովը որոշեց ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել <<ԱՐԳՈՀՇԻՆ>> ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Սիմոնյան)

3.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 29.11.2017թ.-ին ժամը 11:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան

Վ. Վարդանյան

Ռ. Հարությունյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան